ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԳՀԾՁԲ-2018/10-ԵՊԲՀ»

ք.Երևան «07» «ապրիլի» 2018թ.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա.Ա.Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Յուքոմ» ՍՊ ընկերությունը, ի դեմս կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ.Ասատուրյանի որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 18.225.000,00 (տասնութ միլիոն երկու հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել

ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«Յուրոմ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2	ՀՀ, ք.Երևան, Գ.Լուսավորիչի 9
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 11500166513800	Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 01503448	ՀՎՀՀ 00024873
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան	էլ. հասցեն՝ corporate@ucom.am
	Հեռ. (011) 44 44 44
	Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ.Ասատուրյան
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 04 » « 04 » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/10-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	64211300	Նայել Հավելվածում	դրամ	18.225.000,00	1	Կորյունի 2, Մուրացան 114, Մամիկոնյանց 30, Դավիթ Անհաղթի 10, Կոմիտասի 49/12, Հերացի 5/1, Հերացի 7ա	պայմանագիրը կնքելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը
ԸՆԴԱՄԵՆԸ				**18.225.000,00**			

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Յուքոմ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գ.Լուսավորիչի 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Էլ. հասցեն՝ corporate@ucom.am
Հեռ. (011) 44 44 44
Կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար՝ Կ.Ասատուրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված

Տեխնիկական բնութագիր

Հեռահաղորդակցության կապի ծառայությունների տրամադրում

Ծառայությունները ներկայացնում են Համալսարանի լոկալ ցանցի (օպտիկամանրաթելային, ոլորված զույգ, անլար, ֆիքսված քաղաքային և ներքին հեռախոսահամարների ինչպես նաև բջջային հեռախոսահամարների ինտեգրման հնարավորությամբ համակարգ

Ինտերնետ կապի տրամադրում գլխամասում

1. .am տիրույթում ysmu.am, meduni.am համալսարանի դոմենների և @ysmu.am, @meduni.am էլեկտրոնային փոստի անունների գրանցում, IP հասցեների գրանցում և հատկացում:
2. Համալսարանի IP հասցեների գրանցում և հատկացում (PI կամ PA 256 հասցե):
3. Համալսարանի կայքերի սպասարկում՝ համալսարանի www.ysmu.am և www.meduni.am կայքերի տեղակայում ինտերնետ պրովայդերի տարածքում համալսարանի կողմից տրամադրված 2 համակարգչի վրա (collocation)՝ առնվազն 1000 մբիթ/վրկ համալսարանի, 100 մբիթ/վրկ հայկական և 2 մբիթ/վրկ ինտերնետ հասանելիությամբ, միաժամանակ տրամադրելով սեփական հոսթինգի ծառայությունները՝ ամսեկան անսահմանափակ տրաֆիկ, տրամադրվող տարածք (Mb) 10000, FTP, MySQL, PHP, ենթադոմեյներ (100), պահեստավորում, պլանավորված խնդիրներ (Cron), SSH հասանելիություն, կայքի վիճակագրություն, կայանված դոմեններ (Parked Domains), DNS աջակցություն, էլ. փոստի վերահասցեավորում (E-mail forwarding) պայմանագիրը կնքելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:
4. Ինտերնետ կապ՝ գլխավոր հանգույցում (Կորյուն փ. 2) հետևյալ պարամետրերով՝
   - 300 մբիթ/վրկ (CIR) սիմետրիկ, երաշխավորված արագությամբ ՀՀ տարածքից դուրս արագությամբ.
   - մինչև 1 գբիթ/վրկ (CIR) սիմետրիկ, երաշխավորված արագությամբ պրովայդերի ցանցում.
   - մինչև 300 մբիթ/վրկ արագությամբ «ԱՐՄԻՔՍ» (ARMIX) Հայկական Ինտերնետ Տրաֆիկի Փոխանակման Հիմնադրամի հանգույցի հետ.

Ինտերնետային կապի տրամադրում և վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) աշխատանքի ապահովում մասնաճյուղերում

1. Ինտերնետ կապի տրամադրում հետևյալ հասցեներում ՝
   - Մուրացան հիվանդանոցային համալիր (Մուրացանի փ. 114)
   - Թիվ 2 ստոմատոլոգիական պոլիկլինիկա (Մամիկոնյանց փ. 30)
   - Զեյթուն ուսանողական հանրակացարան (Դավիթ Անհաղթի փ. 10)
   - Կոմիտաս ուսանողական հանրակացարան (Կոմիտասի փ.49/12)

   IP հասցեների տրամադրում, սիմետրիկ երաշխավորված ինտերնետ կապի տրամադրում բոլոր նշված հանգույցների համար, 300 մբիթ/վրկ (CIR) երաշխավորված սիմետրիկ արագությամբ կապ գլխավոր հանգույցի (Կորյուն փ. 2) հետ և ընդհանուր 50 մբիթ/վրկ սիմետրիկ երաշխավորված ինտերնետ կապ (CIR) բոլոր մասնաճյուղերի համար:
2. Կորպորատիվ ցանցի ստեղծում հետևյալ հասցեներում ՝
   - Թիվ 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա (Հերացի փ. 5/1)
   - Հերացի պոլիկլինիկա (Հերացի փ. 9)

Շարժական (3G/4G) և վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) կապի ծառայությունների և սարքավորումների տրամադրում

1. 3G/4G ինտերնետ՝ ինտերնետ ծառայություն WiFi մոդեմի միջոցով՝ ներբեռնում մինչև 150 Մբ/վ, վերբեռնում մինչև 50 Մբ/վ, ամսեկան 50 ԳԲ գերարագ ինտերնետ ծառայությունից օգտվելու հնարավորություն, 2 Մկ/վ անսահմանափակ ինտերնետ – 15 հատ
2. Համալսարանի վիրտուալ մասնավոր ցանցի (VPN) աշխատանքի ապահովում շարժական կապի/սարքավորումների միջոցով:
   Կապ գլխավոր հանգույցի հետ (Կորյունի փ. 2) հետևյալ պարամետրերով՝

   25 մբիթ/վրկ սիմետրիկ, երաշխավորված արագությամբ, IP հասցեների տրամադրում:

   3G/4G VPN՝ 3G/4G վիրտուալ ցանցի ստեղծում առնվազն 50 կետերի Երևան քաղաքի տարածքի և գլխավոր հանգույցի միջև: Արագություն (ներբեռնում և վերբեռնում) երաշխավորված 2 mbps USB մոդեմի միջոցով:

   Վճարումը կատարվում է փաստացի միացրած մոդեմների համար ամսեկան կտրվածքով:

Սարքավորումների տեխնիկական բնութագրերը՝

հհ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր	Չափման միավորը	Քանակը
1.	4G WiFi – մոդեմի տրամադրում	*Specifications:* *Ինտերֆեյս՝ USB և Wi-Fi* *Wi-Fi միացում՝ մինչև 10 սարքավորում* *Հաճախականություն ՝ LTE FDD: B1/B3/B5/B7/B8/B20, DC-HSUPA+/ HSDPA+/HSPA/UMTS: B1/B5/B8, EDGE/GPRS/GSM 1900/1800/900/850 ՄՀg* *Տվյալների փոխանցման արագություն՝* *LTE FDD (DL) 150 Մբ/վ, LTE FDD (UL) 50 Մբ/վ* *DC-HSPA+ (DL) ներբեռնում մինչև 43.2 Մբ/վ* *HSPA+/HSUPA՝ վերբեռնում մինչև 5.76 Մբ/վ* *WCDMA, EDGE, GPRS, WLAN: IEEE 802.11a/b/g/n* *OS: Windows XP, Windows Vista, Windows 7, Windows 8, Windows 10*	հատ	15
2.	3G/4G USB մոդեմի տրամադրում	*Specifications:* *Ինտերֆեյս՝ USB* *Հաճախականություն՝ HSDPA/UMTS (900/1900/2100 MHz) և GSM/GPRS/EDGE (850/900/1800/1900 MHz)* *Տվյալների փոխանցման արագություն (min 7.2 Mbps downlink, 2 Mbps uplink)* *Hardware specifications:* *USB stick with retractable USB connector, Status LED indicators, SIM card interface compliant with 3GPP 31.101 and 31.102 supporting 1.8 and 3V UICCs,* *OS: Windows XP, Windows Vista, Windows 7, Windows 8, Windows 10*	հատ	50
3.	4G Ethernet մոդեմի տրամադրում	*Specifications:* *Ինտերֆեյս՝ USB ,Wi-Fi, Ethetnet* *Wi-Fi միացում՝ 8մինչև 32 սարքավորում Wi-Fi ցանցին միացնելու հնարավորություն (802.11b/g/n* *Հաճախականություն ՝ HSUPA/HSDPA/WCDMA 2100/900 ՄՀg; EDGE/GPRS/GSM 1900/1800/900/850 ՄՀg* *Տվյալների փոխանցման արագություն՝* *HSPA+՝ ներբեռնում մինչև 21.6 Մբ/վ, վերբեռնում մինչև 5.76 Մբ/վ* *WCDMA՝ ներբեռնում մինչև 384 Կբ/վ, վերբեռնում մինչև 384 Կբ/վ* *OS: Windows XP, Windows Vista, Windows 7, Windows 8, Windows 10*	հատ	2

Ֆիքսված և բջջային հեռախոսակապ

1. Ֆիքսված և բջջային հեռախոսակապը պետք է կցված լինի մեկ վիրտուալ կայանի:
2. Ֆիքսված հեռախոսակապը բաղկացած է 152 քաղաքային և 500 ներքին հեռախոսահամարներից:

3. Բջջային հեռախոսակապի տրամադրում մինչև 300 հեռախոսահամարների
4. Բջջային հեռախոսահամարները պետք է գործեն ինչպես առանձնացված, այնպես էլ հնարավորություն ունենան կատարել ելքային զանգեր մեկ հիմնական հեռախոսահամարի միջոցով:
5. Յուրաքանչյուր քաղաքային և բջջային հեռախոսահամար պետք է ունենա նաև իր ներքին քառանիշ համարը:
6. Համակարգում ներգրավված բոլոր հեռախոսահամարները (բջջային, քաղաքային, ներքին) պետք է ունենան հետևյալ հնարավորությունները՝
   - Conference call
   - Call recording
   - Call forwarding
   - IVR (Interactive voice response)
7. Ամբողջական համակարգի կարգավորումների և մոնիտորինգի հնարավորություն վեբ ինտերֆեյսի միջոցով:
8. Վերոնշյալ ծառայությունները պետք է կապված լինեն մեկ միասնական VLAN ցանցով՝ միասնական ինտրանետին հասանելիություն ապահովելու համար:

Համալսարանի տարածքում անլար կապի ապահովում

1. Համալսարանի ուսումնական մասնաշենքերում, ինչպես նաև ուսանողական հանրակացարանների տարածքում ապահովվում է անլար ինտերնետի հնարավորություն ընդհանուր թվով 50 կետ: Անլար կետերի տեղակայումը կատարվում է համաձայն հաստատված նախագծի, տեղակայման ցանկի և ժամանակացույցի:
2. Յուրաքանչուր անլար միացման կետը պետք է ապահովի 25-30 միաժամանակ միացում և ունենա ոչ պակաս 100 մբիթ/վրկ արագություն:
3. Տրամադրվում են անհրաժեշտ սարքեր և ծրագրային ապահովում: Նշված ցանցը ֆիզիկապես տարանջատված է համալսարանական համակարգչային ցանցից: Հնարավորություն է տրվում վերահսկելու անլար ցանցի և սարքավորումների աշխատանքը:

Համալսարանի տարածքում անլար կապի ապահովում

1. Տրամադրել վիրտուալ սերվեր հետևյալ պարամետրերով՝ 4vCores/2.4GHz/24GB RAM/2 TB HDD և ապահովել սերվերին հեռահար հասանելիություն (layer 3) և շարժական կապով (3G/4G VPN) ծառայության միջոցով:
2. Նշված սերվերին առնվազն 1000 Մբ/վ արագությամբ տվյալների փոխանակման ապահովում:

Հավելված N 2
« 07 » « 04 » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/10-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64200000	Հեռահաղորդակցության ծառայություններ	-	-	-	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	**100%**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով ըստ մատուցված ծառայությունների ծավալի:*

ԳՆՈՐԴ

«Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան»
հիմնադրամ
ՀՀ, Երևան, իրավաբանական հասցե՝ Կորյունի 2
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա.Ա.Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Յուքոմ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Գ.Լուսավորիչի 9
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
էլ. հասցեն՝ corporate@ucom.am
Հեռ. (011) 44 44 44
Կորպորատիվ վաճառքի բաժնի
ղեկավար՝ Կ.Ասատուրյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/10-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« » « » 2018թ. կնքված
«ԳՀԾՁԲ-2018/10-ԵՊԲՀ» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն